

ՊԱՊԻՆ ԿՈՉԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ

Հռոմի Լեոն ԺԴ. պապը մաղթեց, որ աշխարհի զանազան շրջաններու մէջ պատերազմող կողմերը մերժեցուն ցուցաբերեն եւ լուծեն խնդիրները: Արեւելեան 23 կաթողիկէ եկեղեցիներուն ներկայացուցիչները ընդունած ատեն պապը դատաւարտեց սուրբ հողերուն վրայ պատահող արհմահեղութիւնը, խոստանալով հմարաւորինս աշխատիլ՝ խաղաղութիւն հաստատելու համար աշխարհի մէջ: Պապը արեւելքի քրիստոնեաներուն նաեւ կոչ ուղղեց ամուր մնալու իրենց հողին վրայ, տոկալու եւ անկէ չհեռանալու:

ԹՐԱՄՓ. «ԱՌՒՆ ԵՒ ՍԱԼԱՄ ԿՐՆԱՆ ԿԱՌՈՒՅԵԼ ԼԱՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸ»

Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամփ յայտնեց, թէ կը փափաքի համաձայնութիւն կնքել Թեհրանի հետ, պայմանաւ որ Իրան վերջ տայ տարածաշրջանին մէջ ահաբեկչական կազմակերպութիւններուն տրամադրած զօրակցութեան: «Իրան պէտք չէ տիրանայ հիւլէական զէնքի



եւ պէտք է գործադրենք Թեհրանի դէմ սահմանուած պատժամիջոցները», ըսաւ Թրամփ: Ռիատի մէջ Շոցի արաբական երկիրներու ղեկավարներուն հետ զումարած զագաթաժողովին ընթացքին, նախագահը վերստին կոչ ուղղեց անյապաղ ազատ արձակելու Կազայի մէջ արգելափակուած գերիները եւ աշխատանք տանելու խաղաղութեան յանգելու համար: «Սակայն, չենք կրնար խաղաղութիւն կնքել, երբ շրջանին մէջ կան անմեղները բռնաբարող եւ չարչարող ղեկավարներ», ըսաւ ան եւ հմարաւոր համարեց Սուրիոյ հետ յարաբերութիւններուն բնականոնացումը: «Լիբանան առիթ ունի ծերբազատուելու Հրգպալայի լուծէն: Նախագահ ժողէ՛ք Մուսն եւ վարչապետ Նաուաֆ Սալամ կրնան կառուցել լաւ պետութիւն մը», ըսաւ Թրամփ: Իր խօսքը ուղղելով Շոցի ղեկավարներուն, ամերիկացի նախագահը պատրաստակամութիւն յայտնեց սերտօրէն համագործակցելու անոնց հետ, նկատի ունենալով աշխարհի քարտէզին վրայ Միջին Արեւելքի կարեւոր դիրքը:

Գագաթաժողովէն օր մը առաջ, ամերիկեան եւ սեւտական կողմերը ստորագրեցին միլիառաւոր տոլարներ արժող ներդրումային համաձայնագրեր: Սպիտակ տունը յայտարարեց, թէ Ռիատ 142 միլիառ տոլար արժողութեամբ զէնք պիտի գնէ յառաջիկայ տարիներուն, իսկ սեւտական ընկերութիւնները ներդրումներ պիտի կատարեն Միացեալ Նահանգներու մէջ, կեդրոնանալով ուժանիւթի եւ արհեստական բանականութեան ոլորտներուն վրայ:

Սեւտական Արաբիոյ արտաքին գործերու նախարար Ֆայսալ պըն Ֆարհան իշխանը իր կարգին յայտնեց, թէ սեւտական եւ ամերիկեան կողմերը շեշտած են Կազայի պատերազմին վերջ տալու անհրաժեշտութիւնը, կոչ ուղղելով չեղարկելու Սուրիոյ նկատմամբ սահմանուած պատժամիջոցները:

Թրամփ ապա ուղղուեցաւ Տոհա, ուր տեսակցեցաւ Քաթարի իշխանին հետ: Վերջինս «խաղաղութեան մարդ» որակեց Թրամփը, վստահեցնելով որ կարելի է համատեղ աշխատիլ՝ զանազան շրջաններու մէջ խաղաղութիւն հաստատելու: Թրամփ իր կարգին ուրախութիւն յայտնեց, որ Տոհա աշխատանք կը տանի տարածաշրջանի խնդիրները լուծելու:

ԹՐԱՄՓ-ՇԱՐԱԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամփ Ռիատի մէջ տեսակցեցաւ նաեւ իր սուրիացի պաշտօնակից Ահմատ Շարաայի հետ, ներկայութեամբ Սեւտական Արաբիոյ գահաժառանգ Մոհամմատ պըն Սալման իշխանին: Սպիտակ տունը յայտարարեց, որ Թրամփ Շարաային կոչ ուղղած է Սուրիոյ մէջ կերտելու նոր պատմութիւն եւ համաձայնագիր կնքելու Իսրայէլի հետ, երկրէն վտարելով «պաղեստինցի ահաբեկիչները»: Ամերիկացի նախագահը առաջարկած է նաեւ համագործակցիլ Ուաշինկթընի հետ՝ կանխելու համար «Իսլա-



մական պետութիւն» կազմակերպութեան վերադարձը Սուրիա: Ան ամերիկեան ընկերութիւններուն կոչ ուղղեց ներդրումներ կատարելու Սուրիոյ քարիւղային եւ կազային ոլորտներուն մէջ: Իսկ Սուրիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, որ Թրամփ-Շարաա ժողովին ընթացքին քննարկուած է ահաբեկչութեան դէմ պայքարի ոլորտին մէջ համագործակցելու հնարաւորութիւնները:

Միացեալ Նահանգներու Արտաքին գործերու նախարարութեան բանքերը պատմական որակեց Շարաայի հետ Թրամփի հանդիպումը, վերահաստատելով Ուաշինկթընի ամբողջական աջակցութիւնը Լիբանանին:

ԱՐՐԱՀԱՄԵԱՆ ՀԱՍՆԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄՈԱԶԱՐԿՆԵՐ

Ամերիկացի յատուկ դեսպան Սթիվ Ուեքթոֆ առաջարկեց, որ Հայաստանն ու Ատրպէյճանը եւս միանան Աբրահամեան համաձայնագրերու ընդլայնումին: «Կը կանխատեսեմ, որ համեմատաբար շուտով տեսնենք Լիբանանի եւ Նոյնիսկ Սուրիոյ մէջ իրավիճակի կարգանումը», ըսաւ ան, չբացառելով նաեւ Լիպոյի միացումը նշեալ համաձայնագրին: «Երբ կը խօսիմ Աբրահամեան համաձայնագրերուն մասին, ապա այդ կրնայ պատահիլ Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ եւս: Մենք շատ մօտ ենք այդ երկիրներուն մէջ հակամարտութիւններու վերջնական լուծումին», ըսաւ Ուեքթոֆ: Ան հաւանական համարեց, որ «մօտիկ ապագային 5-6 երկիրներ եւս միանան համաձայնագրին, շեշտելով աշխարհին մէջ խաղաղութիւն հաստատելու ուղղութեամբ նախագահ Տոնըլտ Թրամփին ջանքերը»: Յիշեցնենք, որ Աբրահամեան համաձայնագրերը 2020-21 տարիներուն Իսրայէլի եւ արաբական շարք մը երկիրներու միջեւ կնքուած համաձայնագիրն է եւ այժմ աշխատանք կը տարուի անոր միացնել նաեւ արաբական շարք մը երկիրներ՝ մասնաւորաբար Սեւտական Արաբիան:

ՅՈՒՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ ՎԻԶԱՆԵՐՈՒ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄԻՆ

Հայաստանի ներքին գործերու նախարար Արփինէ Սարգսեան ընդունեց Երեւանի մէջ Յունաստանի դեսպան Խրիստոս Սոֆիանովիլուսը, որուն հետ քննարկեց Երեւան-Լաթիք բարեկամական յարաբերութիւնները, նախարարական մակարդակով համագործակցութիւնը խորացնելու անհրաժեշ-



տութիւնը եւ ներուժը: Ժողովականները անդրադարձան մասնաւոր Եւրոմիութեան հետ մուտքի արտօնագրերու ազատականացումի թրթածրարին եւ այդ ուղղութեամբ ձեռնարկուող քայլերուն: Յունաստանի դեսպանը յայտնեց իր երկրին ամբողջական աջակցութիւնը Հայաստան-Եւրոմիութիւն մուտքի արտօնագրերուն դրութիւնը ազատականացնելու ջանքերուն:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԼՈՒՇԱՐՈՒՄԸ ԶԳԱՄԱՐԵԼ

Իրաւաբան Ռոման Երիցեան օրինական պարզաբանումով մը յայտանեց, թէ Արցախի Հանրապետութիւնը տակաւին չէ լուծարուած: Յիշեցնելով, թէ Արցախի անկումի օրերուն, նախագահ Սամուէլ Շահրամանեան իրապարակած էր հանրապետութիւնը լուծարելու հրամանագիր մը, սակայն Երեւան փոխադրուելէ ետք մէկ այլ հռչակագրով չեղարկած էր լուծարումի որոշումը, իրաւաբանը բացատրեց, թէ երկու հռչակագրերն ալ իրաականագործութիւն չունին, որովհետեւ կը հակասեն Արցախի մայր օրէնքին եւ ուժի մէջ չեն մտած: Իրաւաբանը ուստի բոլորէն պահանջեց այսուհետեւ չխօսիլ Արցախի Հանրապետութիւնը լուծարուած ըլլալու մասին: Ան յիշեցուց, թէ Ատրպէյճան 30 տարի շարունակ ունեցած է Շուշիի, Աղտամի եւ այլ համայնքներու ղեկավարներ, թէն մշտաւ շրջանները օրին կը գտնուէին հայկական տիրապետութեան տակ: «Տարածքային կորուստով Արցախի էջը փակուած չիամարդէ: Մենք մերը պիտի վերադարձնենք», ըսաւ իրաւաբան Ռոման Երիցեան:



ԴՐԱՍԱՏՈՒՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆԵ

Լիբանանի Կեդրոնական դրամատան կառավարիչ Քարիմ Սուէյտ ներկայ գտնուեցաւ դրամատուներու վերակառուցումի թրթածրարին նուիրուած ժողովին, որուն մասնակցեցան



Ելեւմուտքի նախարարը եւ խորհրդարանի Ելեւմուտքի եւ պետական ամպլարի հարցերով մնայուն յանձնաժողովի նախագահը: Ժողովականները քննարկեցին կառավարութենէն փոխանցուած օրինագիծին սեւագիրը եւ որոշեցին խորհրդակցութիւնները շարունակել մօտիկ ապագային: Կառավարիչը շեշտեց, թէ առեւտրական դրամատուներուն աշխատանքը վերակազմակերպելու հարցով Կեդրոնական դրամատուը ունի միայն կարծիք յայտնելու եւ խորհրդատուական իրաւասութիւն: Ելեւմուտքի նախարար Եասին ժապէր այլ գիծի վրայ յայտնեց, թէ Սուրիոյ նկատմամբ սահմանուած պատժամիջոցներու չեղարկումը դրական պիտի ըլլայ Լիբանանին համար եւս, որովհետեւ հմարաւոր պիտի ըլլայ խորացնել ուժանիւթային համագործակցութիւնը Իրաքի, Եգիպտոսի եւ Յորդանանի հետ՝ սուրիական հողերուն վրայով:


ԳՐԱՍԷ՛Ր ԸԱՅՈՐԴԻ,

ՍԱՏԱՐԷ՛ «ԱՐԱՐԱՏ» - Ի 88-ԱՄԵԱՅ ԳՈՅԵՐԹԻՆ

ՎՏԱՆԳՈՒԱԾ, ԲԱՅՅՈՉԻՄՈՒԹՅՈՒՆ, ՈՉ-ԿՈՐՄՈՒԱԾ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ, ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԸ

ԴՊԿՏ. ԱՐՏԱ ԵՒՊԵՏԵԱՆ (Քուէյթ)

Լեզու, սփիւռք, հայրենիք, յիշողութիւն, ինքնութիւն, ծուլում, մայրենի լեզու, լեզուներու անհետացում, լեզուապահպանում, լեզուներու վերակենդանացում, փոքրամասնութիւններ՝ ամենէն շատ սերտուած միւթերն են ընկերալեզուաբաններու կողմէ: Պատահական չէ, որ լեզուապահպանումի հարցը առաջնահերթ տեղ սկսած է գրաւել համաշխարհային գետնի վրայ:



Թիւերով խօսինք

Անցեալին ունեցած ենք 12.000 լեզուներ, եւ այսօր 6.000 լեզուներ գոյութիւն ունին: Այս 6000 լեզուներէն 276-ը կը խօսուին մէկ միլիոն հաշուող ժողովուրդներու կողմէ եւ 80-90%-ն ալ կը խօսուին բնիկ ժողովուրդներու կողմէ, որոնք հազիւ 10% կը հաշուեն երկրի բնակչութեան: Այս կը նշանակէ, թէ այսօր լեզուներու 80-90%-ը կը գտնուի աշխարհի բնակչութեան 10%-ին մօտ, որոնց մեծամասնութիւնը թիւով քիչ է եւ տկար, ինչպէս՝ Փափուա Նոր Կիմէայի ուարաբուները, որոնք թիւով 500 են, եւ մալու խուբը՝ 3300:

Օրինակի համար, 1500 թուականին Պրագիլիոյ մէջ 1175 լեզուներ կը խօսուէին, 1993-ին անոնց թիւը 200 կը հաշուէր: 1996 թուականին Սուտանի հարաւը 132 լեզուներ կը խօսուէին, 2020-ին անոնց թիւը 17 կը յաշուէր: Այսօր, Ինտոնիզիոյ մէջ 425, Փափուա Նոր Կիմէայի մէջ 312, Աստրալիոյ մէջ 190, եւ Ամերիկայի մէջ 180 լեզուներ վտանգուած են: Կը նախատեսուի, թէ 2100 թուականին 2922 լեզուներ պիտի մնան: Այս առումով, այդ կը նշանակէ, թէ լեզու մը պիտի կորսուի ամէն երկու շաբաթը անգամ մը:

Կորսուած լեզուներ, կորսուած աշխարհներ

Այս իրողութիւնները կը մտահոգեն ընկերալեզուաբանները, որովհետեւ լեզուներու մեծաքանակ անհետացումի հետեւանք մշակոյթներու անհետացումը, կրնայ վտանգել մարդկային ցեղին գոյութիւնը: Այսօր երկրագունդի բնակչութեան թիւը անցած է 8 միլիառը, եւ ան նուաճած է Ամերիկաները, Աստրալիան եւ Խաղաղականի ամենէն փոքր կղզիները, եւ վարժուած է անտառներու, անապատներու եւ սառուցեալի պայմաններուն՝ շնորհիւ իր մշակոյթներուն, որոնք փոխանցուեցան լեզուներու միջոցով, եւ հոնկէ սովորութիւններու, կրօններու եւ արժէքներու թափանցումը եւ տարածումը: Այս տրամաբանութեամբ, որեւէ խախտում լեզուներու այլազանութեան մէջ եւ կրճատում անոնց մշակոյթներու զանազանութեան մէջ, կը նշանակէ մարդկային ցեղին յարմարելու ուժականութեան տկարացում:

Լեզուներու անհետացման անակնկալ պատճառները

Կարելի չէ մէկ բացատրութիւն տալ լեզուներու կրած անկումին: Բնական աղէտներ, հիւանդութիւններ, տեղահանում, կրօնափոխութիւն եւ տնտեսական պայմաններ գլխաւոր ազդակներ են:

Օրինակի համար, Իրլանտայի գետնախնձորի «հիւանդութեան» պատճառած անօթութիւնը (1845-51) մէկ միլիոն անձի մահուան պատճառ դարձաւ եւ մնացորդին զանգուածային գաղթին: 1841-ին, 8 միլիոն հաշուող ժողովուրդը 6,5 միլիոն եղած էր տասնամեակ մը ետք: Գիւղաբնակ ժողովուրդը, որ ամենէն աւելի իրլանդներէն կը խօսէր, ամենէն աւելին տուժեց, ինչ բան որ սատարեց այդ լեզուին անմախքաց տկարացման եւ նոյնիսկ անհետացման որոշ շրջաններու մէջ:

Եւրոպացիներուն Ամերիկա հասնելէն 200 տարի ետք բնիկ ժողովուրդին 90%-էն աւելին մեռաւ հաստատուողներուն եւ անոնց կենդանիներուն բերած հիւանդութիւններուն պատճառով: Կեդրոնական Մեհիքօն 1518-ին, երբ սպանացիները եկան, 25 միլիոնէ աւելէ կը հաշուէր: Սակայն, 1620-ին 1,6 միլիոնի իջած էր անոնց թիւը: Անագոնի մեծ շրջանը ունէր 6,8 միլիոն բնիկ ժողովուրդ, բայց 1992-ին այդ միայն 700.000 կը հաշուէր: Ներկայիս, ըստ ՄԱԿ-ի վիճակագրութիւններուն, HIV/AIDS-էն մահացողներուն 95%-ը կը գտնուի Ափրիկէի եւ Լատին Ամերիկայի մէջ, երկու ցամաքամասեր որոնք կը պարունակեն աշխարհի Է լեզուները:

Անագոնի անտառներուն միլիոնաւոր ծառերու անհետացումը, հանքերու մեծաքանակ գործունէութիւնները եւ շարունակական սպանութիւնը տեղացի ցեղերուն, կը վտանգէ բնիկ ժողովուրդին կեանքը, կը պատճառէ մեծաթիւ արտագաղթ եւ դժուար կը դարձնէ անոնց ջանքերը՝ պահպանելու իրենց մշակոյթը, ւաւանդութիւնները եւ լեզուները:

Համաշխարհային երկրորդ պատերազմի կռիւներուն, Խաղաղականի եւ Հնդկական ովկիանոսի կղզիներու ընկերութիւնները թիրախ դարձան եւ հսկայական վտանգի ենթարկուեցան անոնց լեզուները: Փափուա Նոր Կիմէայի մէջ, ճափոնցիները եւ միացեալ ուժերը պատճառ դարձան հարիւրաւոր խօսակցական լեզուներու ամբողջական կորուստին՝ այրելով բոլոր արխիւները: Նոյնպէս, անտարանշական արշաւներու եւ զաղութատիրական լեզուներու պարտադրումին որպէս հետեւանք հազարաւոր բնիկ լեզուներ եւ մշակութային ժառանգութիւն անհետացան:

Անգլերէնէն անդին

Յաճախ փորձեր ալ կը կատարուին, մանաւանդ համաշ-

խարհային մամուլին կողմէ, մատնանշելու անգլերէնի մեծածաւալ տարածումը եւ անոր ազդեցութիւնը աշխարհի լեզուներուն վրայ: Պատահական չէ, որ անգլերէնը յաճախ կը կոչուի «սպաննող լեզու» ընկերալեզուաբանական հատորներու մէջ: Այդ մէկը, սակայն, կ'օգնէ ճշդելու պատճառներէն միայն մէկը: Բացատրենք:

Ներկայ վիճակը եզակի է. աշխարհ այսքան մեծաթիւ բնակչութիւն չէ ունեցած, համաշխարհայնացումի ընթացքը այսքան արագընթաց չէ եղած, հաղորդակցութեան եւ փոխարդաւիջոցներու ճարտարունաստները այսքան լայնածիր չեն եղած, այսքան լեզուներու միջեւ հաղորդակցութիւն չէ ստեղծուած, եւ որեւէ լեզու այսքան համաշխարհային ազդեցութիւն չէ ունեցած, որքան անգլերէնը:

Հարցումը այն է, թէ ինչպէ՞ս պիտի կրնան լեզուներ, մանաւանդ փոքրամասնութիւն կազմող ժողովուրդներու լեզուները, տոկալ մնան պայմաններու մէջ:

Թեր եւ դէմ տեսակէտներ

Մուֆուէն կը կարծէ, թէ լեզուներ իրենց բնական ընթացքը պէտք է շարունակեն, նոյնիսկ եթէ այդ կը նշանակէ անոնց մահը: Ան կը հաւատայ, թէ արդէն լեզուներու այլազանութիւնը Աստուծոյ պատիժն էր Բաբելոնի մէջ, եւ անոնց նուազումը համերաշխութիւն, խաղաղութիւն եւ բարգաւաճում պիտի երաշխաւորէ:

Այս թեզը պաշտպանողներ 1960-ական թուականներուն Հիւսիսային Ամերիկայի, Աստրալիոյ եւ Անգլիոյ մէջ ծանր պատիժներու կ'ենթարկէին աշակերտներ եւ անոնց բերանը օժառով կը լուային, երբ անոնք իրենց մայրենի լեզուն գործածէին դպրոցին մէջ: Անգլիոյ մէջ, ուսուցիչներ այցելութիւններ կատարեցին իրենց օտար աշակերտներուն տուները՝ գզուշացնելու անոնց մողները եւ արգիլելու տան մէջ անոնց մայրենի լեզուին գործածութիւնը: Անոնք համոզուած էին, թէ երկլեզուութիւնը նոր երկրին հանդէպ հարազատութեան եւ պատկանելիութեան հարցեր կը յարուցանէ եւ կը խանգարէ մանուկին հոգեմտաւոր զարգացումը: Անգլերէնէ զատ ուրիշ լեզու խօսողներ կը նկատուէին ապուշ, ծոյլ, աղքատ, անվստահելի եւ անբարոյ: Այս միջոցառումները եւ համոզումները մղեցին շատ մը գաղթականներ, որ ո'չ միայն լքեն իրենց մայրենի լեզուն, այլեւ փոխեն իրենց անունները եւ մակաւնունները:

Բարեբախտաբար, 1970-ական թուականներուն, շնորհիւ ընկերալեզուաբաններու ուսումնասիրութիւններուն, կը հաստատուի, թէ մայրենի լեզուի դասուանդութիւնը եւ պահպանումը անհրաժեշտ են մշակելու ինքնուրոյն ազգային ինքնութիւն, մշակութային պատկանելիութիւն, ազգային տովորութիւններ, ընտանեկան սերտ յարաբերութիւններ, մանկական յիշատակներ, լեզուի հանդէպ հաւատարմութիւն եւ հարազատութիւն, ազգային պատմութիւն, բարոյագիտութիւն եւ փիլիսոփայութիւն:

Սիւս թէ ինչու մեծ թիւով լեզուագետներ, ինչպէս Տիքսըն, Նեքըլ եւ Ֆիշընը, կը հաւատան, թէ մայրենի լեզուի պահպանութեան հետ կը պահուի մշակոյթ, իւրայատուկ կենցաղավարութիւն, յատուկ ինքնութիւն, աշխարհայեացք եւ մտածելակերպ:

Համաշխարհային նեցուկ

Այս չափանիշները եւ ըմբռնումները ընդգծելու առումով, Միացեալ ազգերու կազմութրպութիւնը եւ Եւրոպական միութիւնը որդեգրած են յստակ որոշումներ՝ ապահովելու փոքրամասնութիւններու լեզուական իրաւունքները: Լեզուաբաններու հրամցուցած լուսաբանութիւնները եւ միջազգային մարմիններու որոշումները կու զան հաստատելու, թէ կարելի չէ համաշխարհային համերաշխութիւն ապահովելու պատրուակով քաջալերել գաղութներու լեզուներու հարստահարումը կամ մէկ լեզուի եւ մէկ մշակոյթի բռնակալական ախորժակները:

Այս զօրակոչին իբրեւ ենթահող կը ծառայեն ընկերաբաններու եւ լեզուաբաններու մեծ խումբի մը աշխատասիրութիւններուն արդիւնքները: Անոնք կը հաւատան, որ երբ մայրենի լեզուի փոխանցումը խախտի, անոր կը հետեւի ժառանգուած գիտութեան լուրջ կորուստ, որովհետեւ այդ կը պարունակէ թէ՛ անձնական եւ թէ՛ ազգային պատմութիւններու բանալին, կը յատկանշէ ժողովուրդի մը մշակութային, անձնական եւ ազգային ինքնութիւնը, կ'ընդգծէ անցեալի եւ նախնիներու հետ կապը եւ շարունակականութիւնը, կ'արտացոլայ իւրայատուկ աշխարհայեացք եւ դէպքերու մենկաբանութիւն, կ'ընդգրկէ անհրաժեշտ, հետաքրքրական եւ հմայիչ քերականական, բառագիտական եւ հնչիւնաբանական յատկանիշներ եւ կը յառաջացնէ ընկերային համերաշխութիւն, ինքնավստահութիւն եւ մշակութային հպարտութիւն:

Ազգային ինքնագիտակցութեան զարթօնք

Պատահական չէ, որ այսօր յունական, իտալական եւ չինացի կարգ մը գաղութներ Հիւսիսային Ամերիկայի մէջ զօրաշարժի ենթարկուած են՝ պահպանելու իրենց նախահայրերուն լեզուները, որովհետեւ անոնք հպարտ կը զգան անգամ մը եւս իրենց ժառանգութեամբ, դրական կեցուածք սկսած են մշակել իրենց լեզուին հանդէպ, մտադրած են օգտուիլ իրենց լեզուին հրամցուցած արժէքներէն, սկսած են գիտակցիլ ազգային միասնականութեան կարեւորութեան, անհրաժեշտ կը սեպեն հայրենիքի հանդէպ իրենց կապուածութիւնը եւ կ'ուզեն կառչիլ իրենց իւրայատուկ կրօնական հաւատալիքներուն եւ ծեսերուն:

Երբ մեր լեզուն դարձաւ վտանգուած ժառանգութիւն

Իսկ, երբ 2010-ի Փետրուարին, ԵՌԽԵՄՔՕ-ի Վտանգուած լեզուներու ցանկին վրայ գետնուղեցաւ արեւմտահայերէնը, մեր մայրենի լեզուն, թերեւ լեզուներու անհետացումը եւ մահը ալ առասպել մը չէր, կամ ուրիշներուն պատահելիք բան մը, այլ քիչ մը աւելի հարազատ:

Աւելին յաջորդին:

ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԱՄՏԱԾՈՒԱԾ ԸԼԼԱԼՈՒ ԻՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՍՈՐԱԿԱՆ ԱԶԱԽ ԳԻՒՂԻ 1915-Ի ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԸՆԹԵՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՎԱՏԵԱՆ

1915-ի զարման վերջերը եւ ամռան սկիզբը երբ հայոց բռնագաղթի մահուան կարաւանները շարան-շարան կը տարուէին Սուրիոյ հիւսիսային հատուածի գաղթականացները, հոնկէ ալ Տէր Զօր եւ աւելի անդին, Մարտինի արեւելքը գտնուող ասորական Ազախ գիւղը տակաւին թրջական եւ քրտական յարձակումներէ զերծ մնացած էր: Ազախ մեծ գիւղը, որ 1915-ին հերոսական դիմադրութիւն ցոյց տուած է թրջական օրինաւոր բանակին, *պաշըպօզուլքներուն* եւ քիւրտերուն դէմ, Մուսթաֆա Քեմալի իշխանութեան օրերուն վերանվանուած է Տիլ: Տէլվիտ Կաունը կ'ըսէ, թէ Օսմանեան պետութեան քաղաքական վարչամեքենան եւ զինուորական պատասխանատուները մեծապէս շահագրգռուած էին բնաջնջելու Ազախ գիւղը, պարզապէս անոր համար, որ այն բնակուած էր քրիստոնեաներով, որոնք չէին ուզեր մեռնիլ... անանց պայքարելու:

Այս միւթին մասին ստորեւ պիտի անդրադառնանք մանրամասնօրէն, որովհետեւ անիկա թրջական Հայասպանութեան ծրագիրին մէջ կ'ընդգրկուէր երկրին քրիստոնեայ տարրը վերացնելու առումով՝ ի սպաս փանթուրքիզմի նպատակի իրականացման: Ազախը պաշտպանելու գերմանական ճիգերուն, խորհրդակցութիւններուն եւ գերմանացի դիւանագէտներու եւ զինուորական պատասխանատուներու յատարարութիւններէն կը բացայայտուին Հայասպանութեան մէջ Թուրքիոյ կողքին Գերմանիոյ մեղսակցութիւնը եւ Հայոց ցեղասպանութեան կանխամտածուած բնոյթին փաստերը:

Մօտեցող վտանգի նշաններէն ակներեւ կը դառնայ, որ Ազախի գլխուն աղէտ մը կը պատրաստուի 1915-ի Մայիսին: Ազախ գիւղացիները կը սկսին ինքնապաշտպանութեան պատրասարտութիւններ տեսնել: Շրջակայ փոքր գիւղերու քրիստոնեայ բնակիչները կը լքեն իրենց տուները, Ազախի մէջ կը հաւաքուին եւ միացեալ աշխատանք կը տանին դէմ դնելու համար թուրք-քրտական հաւանական յարձակումի մը:

Քրտական ցեղախումբեր ասորի եւ քաղդէացի ու հայ քրիստոնեաներէ պարպուած շրջակայ գիւղերուն վրայ կը յարձակին, տուները կը կողոպտեն, կ'այրեն ու կը գրաւեն 1915-ի Յունիս եւ Յուլիս ամիսներու ընթացքին: Անոնք Օգոստոսի կէսերուն Ազախը կը պաշարեն: Ասորական Միտիաթ աւանը (տե՛ս Միտիաթ –գիւղաքաղաք Արեւմտեան Հայաստանում, Տիարպեթիի նահանգի Մարտինի գաւառում Միտիաթի գաւառակում, սրա կեդրոնը, 1890թ ունէր 900, 1915-ին՝ աւելի քան 1500 հայ բնակիչ, որոնք Մեծ Եղեռնի ժամանակ կոտորուել կամ տարագրուել են- Թաղէս Յակոբեանի, Ստեփան Մելիք-Բախշեանի եւ Յովհաննէս Բարսեղեանի կազմած «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղամուկների բառարան»ը, Երևան, էջ 2894/4814- համաճանցային բառարան) թուրքերուն եւ քիւրտերուն շաբաթ մը դիմադրել յետոյ ինկած էր: Անոր բնակիչներուն մեծ մասը ջարդուած էր, իսկ մնացեալը բռնագաղթուած: Քանի մը ասորական գիւղեր, ինչպէս Միտիաթի հիւսիսը գտնուող Իվարտօ (ներկայիս՝ Կիւլկէօզի) գիւղը, Միտիաթի հիւսիս-արեւելքը գտնուող Հահ (ներկայիս՝ Անիթլի) գիւղը եւ Միտիաթի ու Ազախի միջեւ գտնուող Պասիպրին (ներկայիս Հապեթլի) գիւղը քանի մը օր աւելի կըցան դիմադրել թուրքերուն եւ քիւրտերուն դէմ:

Թուրքիոյ մէջ գործող գերմանական զինուորական հրամանատարութեան ուշադրութիւնը գրաւած էր թուրքերու ոչ-հայ քրիստոնեաները՝ ասորիներն ու քաղդէացիները սպանելու գործողութիւնները: Գերմանացիները կը նկատեն թէ իրենց եւ թուրքերու միջեւ զոյացած **միայն հայերը բնաջնջելու լռելեայն համաձայնութիւնը** կը պաշարեն: Ասորական Կաունթի: «Այս մէկը մեր եւ օսմանցիներու միջեւ զոյացած համաձայնութեան դէմ ըմբոստութիւն մըն է եւ Տիգրանակերտի կառավարիչ՝ Մեհմետ Ռեշիտ պէի ծայրահեղ ատելութեան ու քրիստոնեաներուն դէմ կատարուող վատութեան ուղղակի հետեւանքն է», կ'ըսէ Մուսուլի մէջ Գերմանիոյ հիւպատոս Ուոլթըր Հուշթայն: Ան Գերմանիոյ ռայխսբանցլէր (վարչապետ) Թէուպալտ Ֆոն Պերման-Հովսէկին կը գրէ բողոքի նամակ մը, որուն մէջ կ'ըսէ, թէ ասորիներն ու քաղդէացիները միմիայն իրենց զիրենց կը պաշտպանեն եւ պետութեան դէմ որեւէ անկարգութիւն չեն գործեր:

Այսպիսով անգամ մը եւս ակնյայտ կը դառնայ, թէ Գերմանիա նախապէս մշակած եւ ծրագրած էր որոշ ռազմավարութիւն մը պատրաստել ընթացքին իր բոլոր ընկելներուն համար: Ակներեւ է Հայասպանութեան մէջ անոր մեղսակցութիւնը Թուրքիոյ կողքին, որ Գերմանիոյ ռազմավարութեան անբաժանելի մասը կը կազմէր: Երբ կ'ըսենք թէ նախապէս ծրագրուած էր որ միայն հայերը պէտք է բնաջնջել, եւ ոչ միւս քրիստոնեաները, ուրեմն հոս յստակ եւ ցցուն կերպով կ'երեւայ Հայասպանութեան կանխամտածուած բնոյթը:

Քրտական ցեղերը 18 Օգոստոս 1915-ին Ազախի վրայ յարձակում կը գործեն, բայց կը նահանջեն՝ պարտուած եւ շատ գոհներ տալով: Անոնք յաջորդական քանի մը յարձակումներ կը գործեն, սակայն կը ձախողին եւ վերջնականապէս կը քաշուին ճակատէն Սեպտեմբերի սկիզբները: Օսմանեան քաղաքական վարչամեքենան մեծ ճիգ թափելէ յետոյ կը յաջողի օսմանեան բանակի զինուորականները համոզել, թէ Ազախի կռուողներուն մէջ մեծ թիւով յեղափոխական հայեր ալ կը գտնուին եւ

Հարունակութիւնը տեսնել էջ 4

Մեր Արժանաւոր Արուեստագէտներէն

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ԱՇՈՒՂԱԿԱՆ-
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ
ՓԱՅԼՈՒՆ ՄԵԿՆԱԲԱՆ՝
ՃՈՆԻ ԿԵՕՔՃԵԱՆ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂԱՇԵԱՆ

Լիբանանահայ արուեստագէտներն ու արուեստատները միշտ ալ հարստութիւն ու հպարտութիւն առթող իրականութիւններ եղած են, որոնք պատիւ բերած են թէ՛ անհատական-հաւաքական կատարողներու վաստակին, թէ՛ ալ զաղութի արուեստի մակարդակներու բարձրացման ու վարկանշային պահպանման:

Նոյնիսկ երկարամեայ աղիտաբեր ժամանակներուն (քաղաքացիական կռիւներ, անապահովութիւններ, խլրտումներ եւ այլն), նաեւ արտաքին ճնշումներու, բռնութիւններու թէ սպառնալիքներու օրերուն, լիբանանահայ արուեստագէտն ու արուեստատէրը, արուեստի կեդրոններն ու շարժումները, արուեստի հեղինակներն ու պատասխանատուները, երբեք անձնատուր չեղան «պարտադրեալ» արգելքներուն, ընդհաւառակը, միշտ կառչած մնացին իրենց առաքելութիւններուն ու պատասխանատուութիւններուն:



Ասիկա կը փաստէ ու կը հաստատէ, որ հայ ժողովուրդը որքա՛ն արուեստասէր է եւ որքա՛ն հարազատ ժառանգորդն է իր նախնիներուն, որոնք հայ մշակոյթի եւ արուեստի ոչ միայն երկրպագուներ եղած են, այլեւ՝ շինարարներ ու կերտիչներ, հեղինակներ ու հիմնադիրներ, տաղանդներ ու հանճարներ, պատմութեան մէջ արձանագրելով վիթխարի նուաճումներ եւ իրագործումներ, իրենց ստեղծագործութիւններով ու կատարողութիւններով դառնալով մեծութիւններ:

Այս արագ ակնարկը, ցոյց տալու համար, թէ արուեստը՝ իր ամբողջականութեամբ եւ էութեամբ, որքան լայն ու զրաւիչ տեղ կը գրաւէ մարդկութեան եւ ընկերութեան մէջ:

Պատահական չէ, որ հայ ժողովուրդը, իր մշակութային բազմարուեստութեամբ, կը նկատուի աշխարհի հնագոյններէն, հետեւաբար, իրերայաջորդ սերունդներու գաւակներ շարունակած են այդ հրաշալի շառաւիղները, հայ արուեստին տալով յատուկ երանգ ու կշիռ, լիցք եւ արժէք:

Ուրախութիւն է ընդգծել, որ լիբանանահայութեան մէջ չեն պակսած ու չեն պակսիր արժէքաւոր, շնորհալի, խոստմնալի ու տաղանդաւոր ուժեր, որոնք իրենց բնատուր ընդունակութիւններով, ծիրքերով կամ կոչումներով կը ծառայեն հայ արուեստին, կը շէնցեն, կը ծաղկեցնեն ու կը սփռեն զայն իր զանազան արտայայտութիւններով, տարբերակներով, ներկայացումներով ու մատուցումներով, ինչ որ զնահատելի եւ ողջունելի ներդրում է, յատկապէս այն օրերուն, երբ արուեստատէր հասարակութիւնը ծարաւ է անոր ու կ'ուզէ վայելել զայն իր առաւելագոյն յաջողութիւններով, քանի ապրիլը անորմով, նաեւ է ներշնչումի աղբիւր, հոգեկան ու հոգեբանական ազդակներով:

Վստահաբար, բոլոր անոնք որոնք պատեհութիւնը եւ առիթը ունեցած են շփուելու ու հետեւելու յիշարժան, հոգեզմայլ, բոցաշունչ եւ առիքնող տեսահոլովակներու փունջի մը, մանաւանդ 2 Ապրիլ 2025-ին, տեսահոլովակներու շնորհահանդէսին, Ս. Եղիա եկեղեցւոյ մէջ, կատարողութեամբ մենակատար, երիտասարդ մեներգիչ ու բազմաշնորհ՝ ՃՈՆԻ ԿԵՕՔՃԵԱՆին, բացառիկ հոգեպատրուիքը ապրած ըլլալու եւ ու վայելելու անոր երգարուեստը, որ հիմնովին կը բնութիւն ազգագրական, աշուղական, ժողովրդական, գուսանական ու հայրենական երգեր, գերազանցապէս հայկական, նաեւ արաբական եւ եւրոպական կտորներով, որոնք բոլորն ալ այնքան հաղորդական էին, ազնուական, հրաշագեղական ու տպաւորապաշտական, մերթ յուզելով, մերթ խանդավառելով, մերթ ներշնչելով, մերթ ալ հիացնելով հանդիսատես-ակնդիրը:

Ճոնին իւրայայտուկ երգիչ-արուեստագէտ մըն է, որ օժտուած է ինքնատիպ ընդունակութիւններով ու կարողութիւններով, ունի ծայային նրբահիւս երանգներ, արտայայտութեանց բնորոշ գիծեր, երգի ըմբռնողութեան ցայտուն տունալներ, երգեցողութեան հարուստ փորձ, դիմագծային պերճախնդութիւն, բեմական ուշագրաւ կեցուածքներով:

Ասոնց վրայ պէտք է աւելցնել Ճոնին այն հիմնական յատկանիշներէն մէկը, որ առնչուած է գլխաւորաբար երգարուեստի հասկացողութեան հետ, զայն ապրելու եւ ապրեցնելու, ազդելու եւ ազդեցնելու, խօսելու ու խօսեցնելու,

նոյնիսկ երգելու եւ երգեցնելու բացառիկ ունակութիւններով, ինչ որ այս պարագային մեծ առանձնաշնորհում մըն է, որ միմիայն ՃՈՆԻԱԿԱՆ է, ՃՈՆԻԱԳՐՈՇՄՈՒԹԵԱՍԲ, ՃՈՆԻԱՄՏ-ՏՈՒԹԵԱՍԲ ու ՃՈՆԻԱԿԵՐՏՈՒԹԵԱՍԲ:

Ճոնին համալսարանաւարտ է (յաջորդաբար՝ Յայկազեան եւ Ամերիկեան համալսարաններէն), կենսաբանական մասնագիտութեամբ, ապա՝ ոսկերչագործութեան ասպարէզ նետուած, սակայն, սրտին զարկերը, զգացմունքային լարերը, ապրումային կանչերը զինք հանգիստ չեն ձգած, որովհետեւ աշխարհը կը խորաչափէր ու կ'ընկալէր երգարուեստի բոլիս կենսունակութեամբ, հոն ամենէն աւելի ինքզինք հարազատ զգալով, հոն ամենէն աւելի ինքզինք նկատելով սրտածօտիկ, հոն ամենէն աւելի ինքզինք համարելով արուեստածին:

Իմ կարծիքովս, սակայն, Ճոնին ամենէն աւելի օրինաբեր եւ բարեբեր մթնոլորտի մէջ կը գտնուի իր հայրենաշունչ, հայրենակարօտ, հայրենաբուխ ու հայրենախփնդ հոգեզգացումներով, նուիրուելով իր հայրենիքին ու ժողովուրդին, իր սիրեցեալներուն ու հարազատներուն:

Իր երգերը լսողները, զինք ունկնդրողները եւ իրմով ոգեւորողները այլ ընտրանք կամ մտածում չէին կրնար ունենալ, որովհետեւ ՃՈՆԻՆ էր անկիւ, իր ամբողջական կազմութեամբ, բովանդակ բաղադրութեամբ ու խրոխտ ներկայութեամբ, որոնք թափանցիկ ու կենսական էին, անոր կերպարը ու տիպարը միշտ մնալով իրենց երեւակայութեան եւ յիշողութեան մէջ:

Վերջին հաշուով, Ճոնինն լսելով եւ ապրելով անոր ծայրը, մարդ, ՅԱՅ մարդ, ինչպէ՛ս կրնայ լիովին չբաժնել զայն, չսնուիլ անկէ ու մանաւանդ չվարակուիլ անոր ջերմութենէն:

Եթէ Ճոնին սփիւռքեան պայմաններուն մէջ (իմա՝ լիբանանեան) կրցաւ ինքզինք արդարացնել եւ արժեւորել, դառնալով անհատական, շրջապատային թէ ընկերային բեմերու ծանօթ եւ որոնելի դէմք, սակայն ան չբաւականացաւ այդ «ժլատ» ասպարէզներուն մէջ մնալով, այլ՝ ամէն գնով նետուեցաւ երաժշտական-ծայրամարզական-դասընթացքային կայուածներէն ներս՝ Յամազգայինի Բ. Կանաչեանը աւարտելով բացառիկ յաջողութեամբ:

Այնուհետեւ, Ճոնին ոչ միայն լիբանանեան (հայկական թէ տեղական) շրջանակներուն մէջ կը դառնայ ազնուական ներկայութիւն մը, այլեւ արտասահմանեան բազմաթիւ ուստաններու մէջ հանդէս կու գայ իր երգարուեստի փայլուն յաջողութիւններով, իսկ Յայաստանի մէջ իր ելոյթները կ'արժանանան համաժողովրդական արձագանգներու, որ ամբողջական բերուն թրթածրար մըն է, ուր երգը, մեներգիչը, բնութիւնը, նուազախումբը, երաժշտութիւնը իսկական փառաւոճի ու պալաւորութիւն կը ձգեն, զմայլումի, հիացումի ու տպաւորումի պատկերներով, մեծապէս ու խորապէս ներգրաւելով արուեստատէր հասարակութեան տարբեր խաւեր, որոնք կը փնտռեն իր ելոյթները, կարօտով յիշելով եւ ըմբռնելով զանոնք:

Թերեւս իր գլուխ-գործոցը նկատուած է, ի շարս բազմաթիւ իր այլ արժէքաւոր երգերուն ու մեկնաբանութիւններուն, իր նորագոյն երգը, որ կոչած է «Տուն հայրենի» (2025-ին), զայն նկատելով իր ամբողջ հոգաշխարհին խտացուած, բայց յոյժ արտայայտչական ազգային ապրումներուն, ներշնչումներուն ու զգացումներուն բարացուցական, համայնական ու տեսլապաշտական ծնունդներէն խճանկար մը, ոգեղինութեամբ, ազգապաշտութեամբ ու հայրենասիրութեամբ:

Կ'արժէ յիշել նաեւ, որ համրածանօթ երաժշտագէտ-երաժշտահան, խմբավար ու մեծ արուեստագէտ դոկտ.-փրոֆ. Եղուարդ Թորիկեան յատուկ վերաբերմունքով ու մօտեցումով կը գնահատէ Ճոնինի երգարուեստը ու կը զօրակցի անոր յաջողութիւններու երթին, ինչ որ իրօք հոգեբանական-արուեստագիտական մեծ խթան մը կը հանդիսանայ Ճոնինի համար:

2020-էն առդին, Ճոնինն շարք մը երգերու տեսահոլովակները արդէն կ'ապացուցանեն անոր վերելքի ու բարձունքի իրագործումները, յատկապէս վերյիշելով անոցմէ ոճանք, որոնք մեծ եւ յորդառատ ժողովրդականութեան արժանացած են, ինչպէս.

- * Աւարայրի դաշտը – Աշուղ Ճիւսնի
- * Լաճ տնաւեր – Յայ ժող.
- * Յայրենի կարօտ – Աշուտ Պատմագրեան
- * Յովիւի երգը – Խաչատուր Աւետիսեան
- * Սօր սէրը – Գուսան Աշուտ
- * Տուն հայրենի – Արտեմ Խաչատրեան
- * Ալմաստը շողում իս – Գուսան Շահէն
- * Յայրենի պարային շարան – Յայ ժող.

Ահաւասիկ, լիբանանահայ արուեստագէտ մը, որ իր երգարուեստով, անտարակոյս, տակաւին ունի նորանոր ճամբաներ կտրելիք, որովհետեւ, ինչպէս իր հակիրճ, բայց կենսատու կենսագրականը ցոյց կու տայ, Ճոնին իր առջեւ կը գտնէ (կը պղէ) նոր հորիզոնականներու հեռանկարներ:

Մենք ոչ միայն հաղորդակից, այլեւ կողմնակից ու զօրակից ենք անոր բեղուն արեւելումին, իրեն մաղթելով ԾՈՎ երթուղիներ, մէկ կամուրջէն միւսին անցումով, ուր ՃՈՆԻական սէրն ու երգը, հայ երգն ու մեղեդին, հայ ոգին ու հուրը միշտ մնան անմար, հնչուող եւ աւետաբեր:

Շէն ու պայծառ մնաս, սիրելի Ճոնի, քու երգարուեստովդ, կոչումովդ եւ ապագայովդ:



ՇԱԼԱԿ ՄԸ ԿԱՄՔ

ԼԻԶԱ ԲԱՆՃԱՐՃԵԱՆ ԹԵԼՎԻԶԵԱՆ

Ժափառիկի զառիվերը հասնելէ առաջ, լիբանանեան հին ճարտարապետութեամբ կառուցուած, լայն եւ կամարաշէն պատշգամներով, երեք յարկանի շէնք մըն էր, ուր երկար տարիներէ կ'ապրէին տիկին Մարին եւ պարոն Վարդանը: Շէնքին մուտքին նորաշխարհի հսկայ ծառ մը իր ճիւղերն ու տերեւները անկաշկանդօրէն կը ծաւալէր, մասամբ շուք սփռելով պատշգամներուն մէկ բաժինին վրայ, մասամբ մըն ալ քօղարկելով շէնքին քարերուն կրած տարիներու մռայլութիւնն ու հնութիւնը:

Մանկութեանս օրերուն, երբ ծնողքիս հետ իրենց կ'այցելէի, հեռուէն կը մշմարէի պրն. Վարդանը, որ պատշգամը նստած արեւուն ջերմութեամբ կը կազդուրուէր: Քիչ մը անդին՝ տիկ. Մարին, սեւ եւ հաստ շրջանակէ ակնոցներ կրած, ծեռքին ալ իր մետաղեայ եւ զլանածեւ սրճադացը, անդադար սուրճ կ'աղար ու կ'աղար...

Տիկին Մարին հօրս հօրեղբօր դուստրն էր. ամուսինը՝ պրն. Վարդանը, զթասէր եւ համեստ ծերունի մը, մերթ ընդ մերթ մոռացութեամբ տարուած, ատեններ ուշաբերելով իր շուրջի անցուդարծերուն: Ան կը իրճուէր, երբ այցելու մը տեսնէր, որովհետեւ կ'ուզէր իր մէկ հատիկ զաւկին մասին տեղեկութիւն ստանալ. հաւանաբար եկուորները «բան մը» գիտնային անոր մասին: Իր կեանքը տարբեր երանգներով կը կայծկլտար, երբ մտաբերէր իր մէկ հատիկ զաւակը: Պրն. Վարդանը իր լայն բաճկոնի գրպանէն գունաւոր ծիւթի տուփ մը եւ քանի մը շաքարեղէն կը հանէր եւ ինծի տալով մեծ գոհունակութիւն մը կը զգար: Պահ մը իր կորուքամակը եւ դէմքին ակօսները կարծես կը ջքանային եւ համակրելի ժպիտ մը կ'ուրուագծուէր դէմքին վրայ:

Երբ այցելութիւնը, իմ մանկութեանս պատկերացումով, երկար տեւէր, պրն. Վարդանը ներսի սենեակէն մեծ տոպրակ մը բերելով ինծի կու տար: Գոց տրված էի անոր պարունակութիւնը. հոն կային այլազան խաղեր՝ օձի խաղը, մոնոփոլի, խաղաթուղթ եւ այլ խաղեր: Տիկ. Մարինն քրոջը՝ Փայլիմէին թոռները՝ Սիլվան եւ Սազօն, հոն թողած էին այդ խաղերը, որպէսզի երբ այցելութեան գան, փոխանակ մեծերուն «ոչ-հետաքրքրական» միւրերը ունկնդրուէր, ունենան իրենց յատուկ զբաղումը: Շատ անգամ ալ իրար հոն կը հանդիպէինք եւ միասին զուարճալի պահեր կ'անցընէինք: Մեր այցելութիւններուն ընթացքին իրենց հիւրասենեակը յագեցած կ'ըլլար թարմ սուրճի բոյրով. տիկ. Մարինն սրամիտ խօսքերով եւ շատ անգամ ալ նոր եփած կարկանդակի մը խխրժաբեր հոտով:

Տիկին Մարին, հակառակ որ կորսնցուցած էր իր մէկ հատիկ զաւակը, սակայն կրցած էր յաղթահարել ստուերի նման իրեն ընկերակցող դաժան իրականութիւնը: Տղան՝ Անտոնը, Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին, եւ ի՛նչ զուգահիշութիւն, Ապրիլ 24-ին, ռուսի մը պայքրումի հետեւանքով կորսնցուցած էր իր կեանքը: Շատեր պիտի ընկրկէին այս սեւ ճակատագիրին դիմաց, սակայն տիկ. Մարին իր երկաթեայ կամբով կրցած էր զգնել իր ցաւակի վիճակը եւ ծելով մը շարունակել իր «բնական» կեանքը: Հաւանաբար, մտածած էր, թէ զանգատը լուծում մը չէր եւ թէ կեանքը պէտք էր շարունակուէր իր սովորական բնոյթով: Անոր սիւնի մը պէս հաստատուն ֆիզիքականը եւ ինքնավստահութիւնը ինքզինք պարտադրել կու տայ իր շուրջիններուն, որոնք հմայուած կը մնային այս կնկան խիզախութեամբ եւ խոհեմութեամբ:

Ան նկատի առնելով ամուսինին առողջական տկար վիճակը եւ վտիտ ֆիզիքականը, մտադրած էր զաւակին մահը գաղտնի պահել անկէ: Շատ վստահ էր, թէ պրն. Վարդանը պիտի չկարենար դիմակայել այդ ծանր «Արհաւիրք»-ին: Համոզած էր զինք, թէ տղան ծամբորդած է եւ թէ «ամէն բան լաւ է...»: Ի՛նչ վշտալի երեւոյթ... սրտածմնիկ իրականութիւնը թաքցնելով եւ կուտակուած զգացումներդ զսպելով՝ զաւակիդ մահը գաղտնի պիտի պահես, երբ դուն ինքը պոռթկալու պէտքը ունիս կամ թիկունքի մը՝ գլուխդ վրան հանգչեցնելու...

Տիկ. Մարինն օրական դրութեամբ սեւ հագնիլը ինչո՞ւ էր... պրն. Վարդանը չէր կրցած լուծում մը գտնել այս հարցին: Մոռացութիւնը, ատեն-ատեն, անջատած էր անոր մտածումներու շղթային օղակները: Օր մըն ալ պրն. Վարդանն ալ հեռացաւ այս աշխարհէն, հանգիստ միտքով, թէ իր զաւակը օտար երկրի մէջ է եւ թէ «ամէն բան լաւ է...»:

Խելամիտ եւ ծանրակշիռ կին էր տիկ. Մարին: Անէն մէկ հարցի համեմատ յատուկ լուծում մը կամ ճար մը ունէր: Խրատներու շարան մը կը փոխացէր փոքրիկներուն, երիտասարդներուն եւ ընդհանրապէս բոլորին՝ քաղուած իր կեանքի փորձառութիւններէն:

Այսօր «տիկին Մարի»ները հազուադիւս են իրենց իմաստուն խօսքերով, անդդողուելի կամքով եւ անկրկնելի անձաւորութեամբ:



ՖՈՒԹՊՈԼԻ ԽԱՂԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆ

Շաբաթավերջի մրցումները.-
Վաղը
Ալաշկերտ Ուեսթ x Արմինիա

Շաբաթ, 17 Մայիս
Գանձասար x Շիրակ
Փիւնիկ x Արարատ

Կիրակի, 18 Մայիս
Արարատ Արմինիա x ԲԿՄԱ
Ուրարտու x Նոա

Ստորել դասաւորումը.-

խումբեր	մրցում	Յ	Հ	Պ	Կոեր	Միաւոր
1)ՆՈԱ	27	23	2	2	87 - 16	68
2)Ուրարտու	27	18	4	5	57 - 24	57
3)Արարատ-Արմինիա	26	18	4	5	62 - 26	55
4)Փիւնիկ	28	16	2	10	52 - 32	50
5)Վան	28	13	7	8	51 - 34	43
6)Շիրակ	28	9	5	14	27 - 49	32
7)ԲԿՄԱ	27	9	5	13	40 - 48	29
8)Արարատ	26	8	5	13	29 - 44	26
9)Ուեսթ Արմինիա	26	7	2	17	22 - 66	23
10)Ալաշկերտ	27	4	8	15	20 - 50	20
11)Գանձասար	26	0	3	23	10 - 68	3

ԱՆԳԼԻԱ (37-ՐԴ՝ ՆԱԽԱԿԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒՄՆ)

Վաղը
Ասթոն Վիլլա x Թոթըմհեմ
Չելսի x Մանչեսթըր Եունայթըտ

Կիրակի, 18 Մայիս
Էվլըթըն x Սաութհմփթըն
Ուեսթ Յեմ x Նոթինկհամ Ֆորեսթ
Պրեմթֆորտ x Ֆուլհեմ
Լէյսթըր Սիթի x Իփսուիչ Թաուն
Արսենալ x Նիւքեմըլ

Երկուշաբթի, 19 Մայիս
Պրայքըն x Լիվըրփուլ

Երեքշաբթի, 20 Մայիս
Քրիսթըլ Փալաս x Վուլֆգ
Մանչեսթըր Սիթի x Պըրնմանութ

ՄՊԱՆԻԱ (36-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ)

Այսօրուան մրցումները՝
Ռայօ Վալեքանօ x Ռէալ Պեթիս
Օսասունա x Աթլետիքո Մատրիտ
Կեթֆէլ x Աթլետիք
Էսփանիոլ x Պարսելունա

ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԱՄՏԱԾՈՒԱԾ ԸԼԼԱՆՈՒ ԻՐՈՂՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած էջ 2-էն

սաստիկ կարիքը կը զգացուի զանոնք ընկճելու։ Անոնք կը ստեն գերմանացի զինուորականներուն ըսելով, թէ Ազախի բնակիչներուն մեծ մասը ընթոստ հայեր են։ Ուստի ոճրային նախաձեռնութիւնը օսմանեան բանակը կը ստանձնէ։ Այդ օրերուն Ազախի մօտերէն Էօմեր Նաճի պէյի հրամանատարութեան տակ որոշ յանձնարարութեամբ մը դէպի Պարսկաստան ուղղուող օսմանեան բանակէն զունդ մը կ'անցնէր գերմանական զունդի մը ընկերակցութեամբ։ Գերմանական զունդին հրամանատարը Կարինի նախկին փոխիւպատոս հազարապետ Մաքս Էրվին ֆոն Շէօփներ-Ռիխթերն էր։ Էօմեր Նաճի պէյ իսկոյն իր ոյժերը կը կազմակերպէ եւ զօրաւոր յարծակում մը կը գործէ Ազախի վրայ։ Միւս կողմէ, հազարապետ Շէօփներ-Ռիխթեր կտրականապէս կը մերժէ մասնակցիլ յարծակումին։ Ան տեղական իշխանութիւններուն ըսածներուն չէր հաւատար եւ լաւ գիտէր թէ Ազախի բնակչութեան ջախջախիչ մեծամասնութիւնը ուղղափառ ասորիներ էին։ Ռիխթեր համոզուած էր, որ Ազախի ընդդիմութիւնը զուտ ինքնապաշտպանութեան համար էր եւ ոչ մէկ ընթոստութեան նշոյլ կար անոր մէջ։ Ասորիները, տեսնելով հայոց պատահած աղէտները, կը վախճային թէ թուրքերը զիրենք ալ պիտի կոտորէին, ուստի ինքնապաշտպանութեան դիմած էին։ Ազախի հարցին շուրջ Թուրքիոյ մէջ գերմանական ոյժերու հրամանատարութիւնը ժողով կը գումարէ ընդհանուր հրամանատար Քոլմար ֆոն տէր Կոլցի նախագահութեամբ եւ որոշում կը տրուի չմասնակցիլ ասորիները բնաջնջելու բախումներուն։


Ազախի կռուող քաջերը բուռն դիմադրութիւն ցոյց կու տան Նաճի պէյի ոյժերուն։ Վերջինս կը յայտնաբերէ Ազախի բնակչութեան մեծամասնութեան ասորի ուղղափառ ինքնութեան իրականութիւնը։ Նոյեմբեր ամսուան մէջ ասորի ազատամարտիկները կը յաջողին լեռներուն մէջէն նախապէս բացուած փապուղի մը օգտագործելով յառաջանալ թրքական դիրքերուն մօտ եւ մեծ թիւով թուրք զինուորներ սպաննել ու գրաւել մեծ քանակութեամբ զէնք։ Նաճի պէյ պարտուած էր եւ կը փափաքէր պատուաւոր ելք մը գտնել ճակատամարտին։ Ան պատուիրակներու միջոցաւ կը բանակցի ասորի կռուողներուն հետ։ Հակառակ Էնվեր փաշայի հրամանին՝ Ազախը քարուքանդ ընելու, Նաճի պէյի օգնականը՝ Քամիլ պէյ թրքական ոյժերուն հրաման կ'արձակէ նախանջել եւ թոյլ տալ Ազախի բնակիչներուն խաղաղ ապրելու։ Երկու կողմերուն միջեւ հասնաձայնութիւն մը կը գոյանայ։ Խաղաղ ապրելու խոստումին փոխարէն Ազախի բնակիչները կը խոստանան տուրքերը վճարել ու գրաւուած զէնքերը վերադարձնել օսմանեան բանակին։

ԵՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ

Վերջին 40 օրերու ընթացքին խմբագրատան գրադարանը հաճոյքով հիւրընկալեց քանի մը գիրքեր եւ պարբերաթերթեր։ Հեղինակներուն եւ հրատարակիչներուն կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը եւ ստորեւ կը ներկայացնենք զանոնք, տալով ամփոփ տեղեկութիւններ։


1) «ԶՄՍԱՌԵԱՆՔ Ի ՍՓԻՌՍ

ԱՇԽԱՐՀԻ», Զմմառու պատրիարքական կղերի միաբանութեան պարբերական, Զմմառ – Լիբանան, 2019 – 2024, համար 30: 168 գումագեղ էջերով, Հայր Պետրոս վրդ. Մարաշլեանի խմբագրականով:



2) «ԼԻԲԱՆԱՆԱԴԱՅ ԹԱՏՐՈՆԸ

(1920 - 2020)», հեղինակ՝ Յարութ Գնդունի։ «Արամ Մանուկեան» մատենաշար, Պէյրութ 2025: 383 էջ, սեւ-սպիտակ նկարազարդ։ Վարուժան Թէնպէլեանի խմբագրութեամբ եւ յառաջարանով։



3) «ԽՕՍՆԱԿ», պաշտօնաթերթ

Հ.Բ.Ը.Միութեան Հ.Ե. Ընկերակցութեան Լիբանանի Շրջանակի, 68-րդ տարի, թիւ 1-2 Յունուար-Փետրուար 2025: Խմբագիր՝ Համբիկ Մարտիրոսեան։ Պատկերազարդ, 80 էջ։




4) «ՄԵՐ ՏՈՒՆԸ», հեղինակ՝ Սեդա

Մարկոսեան Խտըշեան։ Յուշապատում 298 էջ, լուսանկարներով։ Տոքթ. Արմենակ Եղիայեանի «Յառաջարանի փոխարէն»ով եւ Կարօ Յովհաննէսեանի սրտի խօսքով։



5) «ՏԵՂԵԿԱՏՈՒ ՀԲԸՄ-ՀԱՅ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՒԹԵԱՆ (2023-2024)»։ Հրատարակութիւն՝ Հ.Ե.Ը.ի Կեդրոնական վարչութեան, խմբագրութիւն՝ Հ.Ե.Ը.ի Մամլոյ եւ տեղեկատուական գրասենեակի։ Պատկերազարդ, երկլեզու, հայերէնը՝ 139, անգլերէնը՝ 101 էջ։ Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Վիգէն Չերչեանի «Երախտիքի խօսք»ով։



ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՈՐ

Պէյրութ (արեւոտ) ցերեկը 23/18 գիշերը՝ 64% տամուկ

Երեւան (ամձրեւոտ) ցերեկը 15/9 գիշերը՝ 71% տամուկ

Հալէպ (մասամբ ամպամած) ցերեկը 27/16՝ գիշերը՝ 41% տամուկ

Ղամակոս (արեւոտ) ցերեկը 25/12՝ գիշերը՝ 29% տամուկ

Տուապ (արեւոտ) ցերեկը 38/29 գիշերը՝ 27% տամուկ

Լոս Անճելըս (արեւոտ) ցերեկը 23/15՝ գիշերը՝ 51% տամուկ

Սիտնի – վաղը (թեթեւ անձրեւ) ցերեկը 20/13՝ գիշերը՝ 83% տամուկ

Մոնթփիլիտո – վաղը վաղը (ամպոտ) ցերեկը 24/18՝ գիշերը՝ 74% տամուկ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՈՐ

15 Մայիս 2025: Տարուան 135-րդ օրն է: 2025-ի աւարտին կը մնայ 230 օր:

Ղեպեր-ժօներ
1811 - Փարակուէր Սպանիայէն անկախութիւն կը հռչակէ:
1905 – Հիմնադրման օր ամերիկեան Լաս Վեկաս քաղաքի:
1919 - Յոյն-թրքական պատերազմներու ընթացքին յունական զօրքերը ազատագրեցին Թուրքիոյ արեւմուտքը, Եգէական ծովու ափին գտնուող Զմիւռնիա նաւահանգիստը (Իզմիր):
1928 - «Խելագար օդանաւը» cartoons-ին մէջ առաջին անգամ ըլլալով հանդէս եկաւ Միքի Մաուսի եւ Սինի Մաուսի կերպարները:
1935 - Շահագործման յանձնուեցաւ Մոսկուայի մէթրօն, որ ունի մօտ 300 քմ երկաթուղիներ:
1940 - Ռիչըրտ եւ Նորիս ՄաքՏանըլտզ եղբայրները հիմնեցին միջազգային ՄաքՏանըլտզ արագ սնունդի ընկերութիւնը:
2005 - Յայտնաբերուեցաւ Փլութոն մոլորակի Նիքս (Nix) արբանեակը:
1991 - Ընկերվար կուսակցութեան ներկայացուցիչ Էտիք Քրեսօն դարձաւ Ֆրանսայի առաջին կին վարչապետը, սակայն մէկ տարի անց ան կորսնցուց պաշտօնը՝ աճող գործազրկութեան եւ իր կուսակցութենէն ներս աջակցութեան նուազման պատճառով:

Ծնունդներ
1567 – Գլաուտիօ Ժիօվանի Անթօնիօ Մօնթվերտի, իտալացի նշանաւոր երգահան, ջութակահար եւ երգիչ: Գրած է օփերաներ եւ հոգեւոր երաժշտութիւն, որոնք այսօր ալ յաճախակի կը բեմադրուին աշխարհի օփերային թատրոններու մէջ:
1859 – Փիեր Քիւրի, ֆրանսացի բնագէտ: 1903-ին արժանացած է Նոպլէեան մրցանակի:
1949 - Աշոտ Սուրենի Ղազարեան, դերասան, հաղորդավար, կատակերգու եւ երգիչ:
1963 - Ներսիկ Աղասիի Իսպիրեան, երգիչ, երգահան, առաւելապէս յայտնի է իր հայրենասիրական կատարումներով:
1997 - Օսման Տենպէլէ (Մասուր Ուսմանէ Տենպէլէ), մալի-սենեկալական ծագումով ֆրանսացի ֆուքպոլիստ: Հանդէս եկած է ֆրանսական «Ռէն», գերմանական «Տօրթմունտ», սպանական «Պարսելունա» եւ ֆրանսական «Փարի Ս.ժ.» ակումբներէն:
1970 - Զաւէն Գույումճեան, գրող, մեկնաբան, հաղորդավար: Արաբական աշխարհի ամենայայտնի «թըք-շօ»ներու հաղորդավարներէն մին: Հաճընցի արմատներով, կրթութիւն ստացած է Հ.Բ.Ը.Մ. Երուանդ Տեմիրճեան նախակրթարանը եւ Հայ Աւետարանական քոլեճը: Հեղինակ է վաւերագրական գիրքերու, որոնցմէ թարգմանուած են տարբեր լեզուներով:
1969 - Սաւա Մուսթաֆա Հաթէմ Նասրի, սուրիացի երգչուհի:
1937 - Մատլէն Օլպարայթ (Մարիա Եանա Քորպելովա), ԱՄՆ առաջին կին արտաքին գործերու նախարարը:
1924 - Հրանդ Մուշեղի Ոսկանեան, Հ.Խ.Ս.Հ. Գերագոյն խորհուրդի նախագահութեան նախագահ (1985-1990): Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւոր (1999-2003): Պարգևատրուած է Խ.Ս.Հ.Մ. «Աշխատանքային կարմիր դրօշի» եւ Հ.Հ. «Մետրոպ Մաշտոցի» շքանշաններով:

Մահեր
2005 - Ժագ Գալյոճեան, ֆրանսահայ ծաղղանկարիչ, որ առաւելաբար յայտնի է «Les Pieds nickelés» շարքով:
1446 - Թովմա Մեծօվեցի, պատմիչ, մանկավարժ, եկեղեցական, մշակութային եւ հասարակական գործիչ:
1886 - Էմիլի Տիքընսըն, ամերիկացի բանաստեղծուհի:
1916 – Քեռի (Արշակ Գաւաֆեան), հայ ազգային ազատագրական շարժման գործիչ, ֆետայի: Եղած է Հայ Յեղափոխական Ղաշակցութեան անդամ: Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներուն ղեկավարած է Հայ կամաւորական չորրորդ զունդը, մասնակցած է Սարիղամիշի ճակատամարտին:

Կազմակերպութեամբ՝
Ս.Դ.Հ.Կ. Մարօ Նազարէլեան Մասնաճիղի

Մայրերու օր

Տեղի Կ'ունենայ Շաբաթ, 24 Մայիս, 2025-ի, առաւօտեան ժամը 11-էն սկսեալ "Mamoutia" ճաշարանէն ներս, Զալլա

Ձեր ներկայութիւնը հաստատել միշտէ Մայիս 15
Ընամայնելով, 70/110919 կամ 71/316298

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سبائية يومية أرمنية
تصدر عن شركة ماسبيو للصحافة والشعر (ش.م.م.)